



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ
СОБСТВЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 2 (42)

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2007 թվականի հունիսի 15-ից

ԳՅՈՒՏԵՐ	4, 126
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	6, 128
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	23, 144
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	25, 146
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ	27, 147
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	29, 149
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	41
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին</i>	43
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	112
ՑՈՒՑԻՉՆԵՐ	115
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	118
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	151

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
 Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
 Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
 Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
 Тел. (374 10) 561-126 отдел информационно-технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 126
Сведения о выданных патентах.....	6, 128
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	23, 144
Сведения о выданных патентах.....	25, 146
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	27, 147
Сведения о выданных патентах.....	29, 149
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	41
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	43
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	112
УКАЗАТЕЛИ.....	116
СООБЩЕНИЯ.....	117
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	151

CONTENTS

INVENTIONS.....	4, 126
Information on granted patents.....	6, 128
UTILITY MODELS.....	23, 144
Information on granted patents.....	25, 146
INDUSTRIAL DESIGNS.....	27, 147
Information on granted patents.....	29, 149
TRADE MARKS.....	41
Information on registered trade marks and service marks	43
Information on renewal of effect of trademark registration	112
INDEXES.....	116
REPORTS.....	117
TWO-LETTER CODES.....	151

q3ntstr

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*
 - A1** *Գյուտի հիմնական արտոնագիր*
 - A2** *Գյուտի նախնական արտոնագիր*
 - B2** *Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր*
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
- 24** *արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը*
- 31** *առաջնային հայտի համարը*
- 32** *առաջնային հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
- 42** *հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը*
- 44** *գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 45** *գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄՍԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 65** *հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը*
- 71** *հայտատուն, երկրի կոդը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) 1944 (13) A2
A01B 43/00
B65G 17/00

(21) AM20060131 (22) 28.07.2006
(42) 01.12.2006

(71) Բելլա Վազգենի Բաբայան (AM), Վազգեն Սեւոյի Բաբայան (AM), Աննա Արմենի Վանյան (AM), Ալեքսանդր Արմենի Վանյան (AM), Արման Յովհաննեսի Փեշտիմալյան (AM)

(72) Բելլա Վազգենի Բաբայան (AM), Վազգեն Սեւոյի Բաբայան (AM), Աննա Արմենի Վանյան (AM), Ալեքսանդր Արմենի Վանյան (AM), Արման Յովհաննեսի Փեշտիմալյան (AM)

(73) Բելլա Վազգենի Բաբայան, Երեւան, Աբելյան 9, բն. 22 (AM), Վազգեն Սեւոյի Բաբայան, Երեւան, Աբելյան 9, բն. 22 (AM), Աննա Արմենի Վանյան, Երեւան, Օրբելի եղբայրների 4, բն. 8 (AM), Ալեքսանդր Արմենի Վանյան, Երեւան, Օրբելի եղբայրների 4, բն. 8 (AM), Արման Յովհաննեսի Փեշտիմալյան, Երեւան, Ա. Տիգրանյան 5, բն. 84 (AM)

(54) **Ժապավենային փոխակրիչով քարհավաք մեքենա**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ քարհավաք մեքենաների ժապավենային փոխակրիչներին, եւ կարող է օգտագործվել գյուղատնտեսության մեջ:

Մեքենայի փոխակրիչն ունի վերին՝ տանող, ստորին՝ տարվող թմբուկներ եւ իր ստորին ծայրով հարում է մեքենայի խոփին: Մեքենայի շրջանակին ամրակցված է մաքրաքերիչ, որն ունի կանգնակներ, քերիչ եւ մաքրիչներ: Քերիչը եռանկյունաձեւ սալիկ է եւ իր երեք գագաթներով ամրակցված է փոխակրիչի շրջանակին հորիզոնական հարթության նկատմամբ անկյան տակ: Սալիկի աշխատանքային քերիչ եզրը հաված է փոխակրիչի ստորին թմբուկին, մյուս երկու եզրերին ամրակցված են մաքրաքերիչի կանգնակները: Կանգնակներն իրականացված են եռանկյունաձեւ եւ դրանց ստորին կողմերին ամրակցված են ռետինե մաքրիչները: Մաքրիչների ստորին ազատ եզրերը հաված են ժապավենի ստորին ճյուղի ներքին մակերեւույթին:

Բարձրացվում է ժապավենային փոխակրի-

չի աշխատանքի հուսալիությունը, ավելացվում է երկարակեցությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1945 (13) A2
A01B 63/118

(21) AM20060179 (22) 09.11.2006
(42) 01.12.2006

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)

(72) Արամայիս Մյասնիկի Ետյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) **Լանջերում աշխատող հողամշակ մեքենաների աշխատանքային օրգանի ընթացքի խորության համաչափության եւ ագրեգատի ուղղույթի կայունության կարգավորման սարք**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ գյուղատնտեսական մեքենաների կախովի համակարգերին:

Սարքն ունի տրակտորին հողակապորեն միակցված եռակետ կախովի մեխանիզմ, այն բարձրացնող-իջեցնող մեխանիզմ, որն ունի հիդրոգլան, լայնական լիսեռ, լիսեռին կոշտ միակցված երկայնական լծակներ, դրանց հողակապորեն միակցված կարգավորող լծակներ, եւ լանջի մակերեւույթի նկատմամբ աշխատանքային օրգանի դիրքը կարգավորող մեխանիզմ, որն ունի երկայնական ձող, որի մի ծայրը հողակապորեն միակցված է տրակտորին, իսկ մյուսը նստեցված է տրակտորի շրջանակի մեջ: Երկայնական ձողին կոշտ միակցված է լայնադրակ, որը եղանաձեւ ծայրերով նստեցված է կախովի լծակային մեխանիզմի լծակների վրա, եւ տրակտորին հողակապորեն միակցված հիդրոգլան:

Հնարավոր է դառնում մեքենայի շրջանակը բերել մշակվող մակերեւույթին զուգահեռ դիրքի եւ միաժամանակ ապահովել հողի մշակության հավասարաչափ սահմանված խորությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1946 (13) A2
A01G 31/00

(21) AM20060161 (22) 20.09.2006
(42) 03.01.2007
(71) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան (AM)
(72) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան (AM), Աննա Թադևոսյան (AM), Ալբերտ Յովսեփյան (AM), Խաչատուր Մայրապետյան (AM)
(73) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան, Երեւան, Մամիկոնյանց 47/1, բն.47 (AM)

(54) **Տնկարկվող բույսերի անհող աճեցման եղանակ եւ դրա իրականացման համակարգ**

(57) Գյուտը վերաբերում է բույսերի անհող աճեցմանը եւ կարող է կիրառվել միամյա եւ բազմամյա տնկարկվող բույսերի ջերմատնային եւ բացօթյա աճեցման համար: Տնկարկվող բույսերը տեղադրում են անօրգանական սուբստրատով պոլիէթիլենային թաղանթից պատրաստված գլանների մեջ: Գլանները հողից մեկուսացնում են պոլիէթիլենային թաղանթով: Կատարում են սնուցիչ լուծույթի պարբերական կարգավորում եւ անվերադարձ ավտոմատ շիթային մատուցում: Միջանկյալ խողովակաշարի եւ մագնիսական փականների միջոցով ապահովում են արտադրական տնկադաշտերի մի քանի միավորներից մեկի սնուցումը: Սնուցիչ լուծույթը մատակարարում են գլխադիրներով անցքեր ունեցող բաշխիչ խողովակներով:

Տնկարկվող բույսերի անհող աճեցման համակարգն ունի իրար հաջորդաբար միացված սնուցիչ լուծույթի ռեգերվուար, պոմպ, գտիչ, սնուցիչ լուծույթի խտությունը, բաղադրամասերի հարաբերակցությունը եւ թթվայնությունն ավտոմատ որոշող ու կարգավորող սարքեր եւ խողովակաշար: Խողովակաշարին հաջորդաբար միացված են սնուցիչ լուծույթի հոսքի ուղղությունը կարգավորող մագնիսական փականներ, առնվազն երկու միջանկյալ խողովակաշար եւ բաշխիչ խողովակներ, որոնք տեղադրված են անօրգանական սուբստրատով գլանների վրա եւ ունեն գլխադիրներով անցքեր բույսի տնկարկման տեղում:

Ապահովվում է բերքատվության բարձրացումը, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) (2006) (11) 1947 (13) A2
A21B 5/00

(21) AM20060143 (22) 21.08.2006
(42) 01.11.2006
(31) a200600655 (32) 24.01.2006 (33) UA
(71) Ղուկաս Սարգսի Խաչատրյան (UA)
(72) Ղուկաս Սարգսի Խաչատրյան (UA)
(73) Ղուկաս Սարգսի Խաչատրյան (UA)

(54) **Չայկական բարակ լավաշի արտադրման գիծ**

(57) Լավաշի արտադրման գիծն ունի հաջորդաբար տեղակայված կաղապարման մեքենա, մատուցող թեք փոխակրիչ, գլանային մեխանիզմներից բաղկացած ուղղաձիգ բազմաստիճան գրտնակող սարք, թունելային վառարան, խոնավացման համակարգ եւ կայունացման փոխակրիչ՝ հովացման համակարգով: Կայունացման փոխակրիչից հետո տեղակայված է կտրող մեխանիզմ՝ իր թեք վաքով, եւ վակուումային փաթեթավորման սարքավորում: Գիծն ունի հետադարձ կապով ավտոմատ կառավարման համակարգ: Խմորի մատուցման եւ վառարանի փոխակրիչի արագությունները համաձայնեցված են հաճախական աղապտերի միջոցով: Խմորը թխվում է վառարանով 30-45 վրկ անցնելու ընթացքում 250-280°C ջեմաստիճանում: Թխված ժապավենաձեւ լավաշը խոնավացվում է շոգեգեներատորից ստացվող գերտաքացված գոլորշիով եւ ուղղվում կայունացման փոխակրիչ, որտեղ կայունանում է դրա ներքին կառուցվածքը: Լավաշը հովացվում է, հասնում ավտոմատ տվիչներին, որտեղից ստացվող ազդանշանից գործում է կտրող սարքը: Թոփով լավաշ ստանալու համար անջատում են տվիչները եւ տեղադրում թոփը փաթեթելու մեխանիզմ:

Ավտոմատացվում է լավաշի արտադրման պրոցեսը, 2 նկ.:

(74) Ռ. Մանասերյան

(51) (2006) (11) 1948 (13) A2
A43D 11/00

(21) AM20060168 (22) 18.10.2006
(42) 01.11.2006
(71) Չոհրաբ Ալեքսանի Մինասյան (AM), Գայանե Սամվելի Մշեցյան (AM), Աննա Կարեգինի Սինոպյան (AM), Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)

(72) Չոհրաբ Ալեքսանի Մինասյան (AM), Գայանե Սամվելի Մշեցյան (AM), Աննա Կարեգինի Սինոպյան (AM), Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)

(73) Չոհրաբ Ալեքսանի Մինասյան, Գյումրի, Աբովյան 129, բն. 10 (AM), Գայանե Մշեցյան, Գյումրի, Կոմիտերնի 1-ին շարք, 2 (AM), Աննա Կարեգինի Սինոպյան, 3103, Գյումրի, Իսահակյան 8, բն. 52 (AM), Ալեքսան Մկրտչի Արզումանյան, Գյումրի, Յ.Ղանդիլյան 47, բն. 5 (AM)

(54) Կոշիկի ձեւի ջերմախոնավային սեւեռման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կոշիկի արտադրությանը, մասնավորապես՝ կոշիկի ջերմախոնավային մշակման տեխնոլոգիական գործընթացներին:

Կոշիկի ձեւի ջերմախոնավային սեւեռման տարբեր փուլերում օդագոլորշային խառնուրդը, տաք չոր եւ սառը չոր օդը մատուցում են կոշիկի վերնամասի ներքին մակերեսույթի կողմից կաղապարի միջոցով:

Բարձրացվում է ձեւակայունությունը՝ կոշիկը չի կորցնում իր արտաքին տեսքը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1949 (13) A2
A61B 5/053

(21) AM20060157 (22) 14.09.2006
(42) 03.01.2007

(71) Ռոբերտ Խաչատրյան (AM)
(72) Հասմիկ Հարությունյան (AM), Տիգրան Խաչատրյան (AM), Ռոբերտ Խաչատրյան (AM)
(73) Ռոբերտ Խաչատրյան (AM)

(54) Կենսաբանական հյուսվածքների եւ հեղուկների վիճակի ախտորոշման սարք

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ կենսաբանական հյուսվածքների եւ հեղուկների վիճակի ախտորոշման սարքերին: Սարքն ունի բռնակ, դրա նկատմամբ առանցքային ուղղությամբ շարժվելու հնարավորությամբ տեղակայված պաշտպանիչ խողովակ: Պաշտպանիչ խողովակի ներսում տեղակայված են աշխատանքային խողովակ, կենսաբանական հյուսվածքից նմուշառման բռնիչ եւ մեկուսացված խողովակ, որի մեջ տեղակայված է ներարկոցի սնամեջ ասեղը: Պաշտպանիչ խողովակի դրսի կողմից ամրակցված

է օղակ: Սարքի բռնակի վրա տեղակայված է ներարկոցը տեղադրելու համար կցաշուրթ եւ էլեկտրական միացուման խրոցակ ու լրացուցիչ հպակային բուլբ: Բռնակի ներսում տեղակայված է զսպանակած գնդի տեսքով կատարված սեւեռիչ: յուտի համաձայն նմուշառման բռնիչը կծաքցան է, որի երկու սրածայր շուրթերը կատարված են միմյանց նկատմամբ սռնու շուրջ պտտական շարժման հնարավորությամբ, զսպանակված տարր, բռնակի վրա ամրակցված զսպանակված ձգան եւ ճկուն ձող, որի միջոցով ձգանի պտտական շարժումը փոխանցվում է կծաքցանի շուրթերից մեկին:

Ապահովվում է նմուշի ճշգրիտ կտրվածքը, հեշտացվում են օպերատորի կողմից կատարվող գործողությունները, 2 նկ.:

(74) Չ. Մանուկյան

(51) (2006) (11) 1950 (13) A2
A61F 5/00

(21) AM20060152 (22) 01.09.2006
(42) 01.11.2006

(71) Արթուր Մկրտիչի Գալանտերյան (AM)
(72) Արթուր Մկրտիչի Գալանտերյան (AM), Արմեն Վաչագանի Այվազյան (AM), Վաչե Գեւորգի Համբարձումյան (AM)

(73) Արթուր Մկրտիչի Գալանտերյան, 0047, Երեւան, Հր. Ներսիսյան 9, բն. 27 (AM)

(54) Սկոլիոզով հիվանդների ողնաշարին ուղղորդված սեղմումային ներգործության եղանակ

(57) Գյուտը վերաբերում է օրթոպեդիայի բնագավառին, մասնավորապես՝ սկոլիոզով հիվանդների ողնաշարին ուղղորդված սեղմումային ներգործության եղանակներին:

Իրանակալի վրա որոշում են ակտիվ ու պասիվ կետերի դասավորվածությունը ըստ ողնաշարի ծովածության աղեղի երկարության, որոշում են ողնաշարի ծովածության աղեղի անկյունները, հաշվարկում են սեւեռման ակտիվ տարրերի ուղղվածության անկյունները, տեղակայման տեղերը եւ քանակը, այնուհետեւ, ըստ հաշվարկային տվյալների, սեւեռման տարրերը համապատասխան անկյան տակ, համապատասխան դասավորվածությամբ եւ քանակով ամրակցում են իրանակալի վրա եւ

սելեռման տարրերի միջոցով ներգործում ող-
նաշարի շտկվող տեղամասերի վրա:

Բարձրացվում է ողնաշարի շտկման արդյու-
նավետությունը, 1 նկ:

(51) (2006) (11) 1951 (13) A2
A61K 38/04
A61P 31/04

(21) AM20060142 (22) 16.08.2006

(42) 01.12.2006

(71) Արմեն Անուշավանի Գալոյան (AM)

(72) Արմեն Անուշավանի Գալոյան (AM)

(73) Արմեն Անուշավանի Գալոյան, Երեւան, Եզ-
նիկ Կողբացու 2ա, բն.66 (AM)

(54) **Պեպտիդ, որն ունի հակասիբիրախտային
ակտիվություն**

(57) Գյուտը վերաբերում է հակամանրեական
ակտիվություն ունեցող պեպտիդներին, մասնա-
վորապես, սիբիրախտի հարուցիչի նկատմամ
ակտիվ պեպտիդներին: Պինդ ֆազային սինթե-
զի եղանակով ստացված պեպտիդն ունի հետեւ-
յալ ամինաթթվային հաջորդականություն. Ala-
Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro-NH₂:

Ապահովվում է հայտարկվող պեպտիդի կի-
րառումը որպես հակասիբիրախտային ակտի-
վություն ունեցող միջոց:

(51) (2006) (11) 1952 (13) A2
B21D 5/02

(21) AM20060094 (22) 12.06.2006

(42) 01.11.2006

(71) «Հայաստանի պետական ճարտարագի-
տական համալսարան» պետական ոչ առեւտ-
րային կազմակերպություն (AM)

(72) Գեւորգ Լյուդվիկի Պետրոսյան (AM), Հայկ
Լեւոնի Լեւոնյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագի-
տական համալսարան» պետական ոչ առեւտ-
րային կազմակերպություն, Երեւան, Տերյան
105 (AM)

(54) **Ծռման ժամանակ մետաղաթերթի շրջանա-
յին դեֆորմացիայի աճի որոշման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը,
մասնավորապես՝ մեծ պլաստիկ դեֆորմացիա-

ների դեպքում փոշենյութերից եռակալված
թերթի ծռման դեֆորմացիոն պարամետրերի
որոշմանը:

Համաձայն ծռման ժամանակ մետաղաթեր-
թի շրջանային դեֆորմացիայի աճի որոշման
եղանակի, ծռվող մետաղաթերթն աստիճանա-
բար բեռնավորում են, ապա իրար հետ համե-
մատում են մետաղաթերթի ծռման երկու իրար
մոտ դեֆորմացիոն վիճակները: Այսուհետեւ
հաշվարկում են մետաղաթերթի ծռման շրջա-
նային դեֆորմացիայի աճը, ընդ որում ծակոտ-
կեն եւ ոչ ծակոտկեն կյութերից մետաղաթերթի
ծռման դեպքում հատույթի տարբեր կետերում
շրջանային դեֆորմացիաների աճերը որոշում
են տրված միեւնույն բանաձեւով:

Ընդլայնվում է կյութերի ծռման տեխնոլոգի-
ական գործընթացների կիրառման տիրույթը,
3 նկ.:

(51) (2006) (11) 1953 (13) A2
B23K 26/00

(21) AM20060061 (22) 17.04.2006

(42) 03.01.2007

(71) Հրանտ Ազիզբեկյան (AM), Գագիկ Գրիգոր-
յան (AM), Նիկոլայ Լյաբին (RU), Միշիկ Ղազար-
յան (RU), Ալեքսանդր Մելքոնյան (AM), Գրիգոր
Մովսեսյան (AM), Ռուբեն Նալբանդյան (US),
Լեւոն Պողոսյան (AM)

(72) Հրանտ Ազիզբեկյան (AM), Գագիկ Գրիգոր-
յան (AM), Նիկոլայ Լյաբին (RU), Միշիկ Ղազար-
յան (RU), Ալեքսանդր Մելքոնյան (AM), Գրիգոր
Մովսեսյան (AM), Ռուբեն Նալբանդյան (US),
Լեւոն Պողոսյան (AM)

(73) Հրանտ Ազիզբեկյան, Երեւան, Զանաքեռ,
շրջանցիկ թունել 110 (AM), Գագիկ Գրիգորյան,
Երեւան, Մարշալ Բաղրամյան 1, բն.22 (AM), Նի-
կոլայ Լյաբին, ՌԴ, Ֆրյազինո, Բարսիլե պրու-
դի 7, բն. 41 (RU), Միշիկ Ղազարյան, ՌԴ, Մոսկ-
վա, Ռամենսկի 11/1, մասնաշենք 100 (RU), Ալեք-
սանդր Մելքոնյան, Երեւան, Լենինգրադյան 10,
բն.61 (AM), Գրիգոր Մովսեսյան, Երեւան, Հա-
լաբյան 22ա, բն.46 (AM), Ռուբեն Նալբանդյան,
10812 Բոսվել Բոդ Չատսվորտ, Սիվլ 91311-
1915 (US), Լեւոն Պողոսյան, Երեւան, Աբովյան
22ա, բն.48 (AM)

(54) **Միկրոդետալների պատրաստման եղանակ
եւ դրա իրականացման լազերային սարք**

(57) Գյուտը վերաբերում է լազերային տեխնիկային:

Ըստ եղանակի պատրաստում են դետալի դիմակը, լազերային համակարգի օգնությամբ ձեւավորում են տրված ուրվագծի լազերային հզոր ճառագայթ, մշակվող օբյեկտի վրա ստանում են դետալի պատկերը եւ անշարժ պահելով օբյեկտը, մշակում են այն: Գնդոլորտային հայելի ունեցող օպտիկական համակարգի օգնությամբ ստանում են պատկերի պահանջվող չափը, ընդ որում բարդ ուրվագիծ ունեցող դետալների միկրոմշակման դեպքում լազերային համակարգը պատում են գնդոլորտային հայելու գնդի կենտրոնի շուրջը:

Լազերային սարքն ունի պատրաստվող դետալի դիմակ, պրոյեկցիոն օպտիկա եւ դիտարկման էկրան, գնդոլորտային հայելի, նույն օպտիկական առանցքի վրա գտնվող օբյեկտիվ, ակտիվ լազերային տարր, լուսաբաժանիչ սեպ, որոնք ունեն գնդոլորտային հայելու գնդի կենտրոնի շուրջը պտտվելու հնարավորություն: Սարքն ունի լրացուցիչ դիաֆրագմա, որը տեղադրված է առաջինիս ուղղահայաց:

Հնարավորություն է ստեղծվում կատարել տեսականորեն անսահմանափակ փոքր չափերի օբյեկտների պատրաստում եւ մշակում, 2 անկախ կետ, 2 նկ.:

-
- (51) (2006) (11) 1954 (13)A2
B32B 23/00
E04F 13/00
 - (21) AM20060194 (22) 08.12.2006
 - (42) 03.01.2007
 - (71) Մանուկ Մարգարյան (AM), Իսահակ Աբրահամյան (AM)
 - (72) Մանուկ Մարգարյան (AM)
 - (73) Մանուկ Մարգարյան, Երեւան, Վահր. Փափազյան փող. 2-րդ նրբ. 133 (AM), Իսահակ Աբրահամյան, Երեւան, Անդրանիկի 85, բն. 8 (AM)
 - (54) **Երեսապատման շերտավոր սալիկ**
 - (57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արտադրությանը, մասնավորապես՝ շենքի ներքին պատերի եւ առաստաղի երեսապատման սալիկներին:

Սալիկն ունի երկու կողմից ստվարաթղթով

ստսնված միջուկ: Միջուկը պատրաստված է փրփրապլաստից:

Ապահովվում են սալիկի բարձր ջերմա- եւ ձայնամեկուսացումը, թեթեւ կշիռը, 1 նկ.:

-
- (51) (2006) (11) 1955 (13) A2
B60B 19/00
 - (21) AM20060144 (22) 23.08.2006
 - (42) 01.11.2006
 - (71) Արման Հովհաննիսյան (AM)
 - (72) Արման Հովհաննիսյան (AM)
 - (73) Արման Հովհաննիսյան, Երեւան, Գրիգոր Լուսավորչի 12, բն. 2ա (AM)
 - (54) **Անիվ**

(57) Գյուտը վերաբերում է տրանսպորտային միջոցների անիվներին:

Անիվն ունի սռնի եւ նրան միակցված անվա- կունդ: Անվակունդն իրականացված է սնամեջ գլանի տեսքով, որի մակերեսային փորված են անցքեր: Անցքերի միջով միջաթափանց անցկացված են շարժուն աշխատանքային ձողեր, որոնց միջին հատվածամասը սնամեջ է, որի մեջ տեղակայված է զսպանակ, ընդ որում զսպանակի ծայրամասերին ամրակցված են հենակային ձողիկներ: Աշխատանքային ձողերի ծայրամասերին փորված են օղակաձեւ ակոսներ, որոնց մեջ տեղակայված են զսպանակավոր տափօղակներ, ընդ որում տափօղակի եզրամասերը դուրս են ցցված օղակաձեւ ակոսներից: Գլանից բարձր՝ նրա պտտման առանցքին զուգահեռ տեղակայված է վերելից թափքին կոշտ ամրակցված սեւեռող համակարգ, որը կազմված է ուղղահայաց կախված ձողերից, որոնց ստորին ծայրամասում փորված են օղակաձեւ ակոսներ, որոնց մեջ մտնելու հնարավորություն ունեն աշխատանքային ձողերի ծայրամասերի օղակաձեւ ակոսներում տեղակայված տափօղակների եզրամասերը:

Մեծանում են խոչընդոտների վրայով անիվի անցնելու ընթանալու հնարավորությունները, 17 նկ.:

-
- (51) (2006) (11) 1956 (13) A2
B60T 8/17
B60T 8/00
 - (21) AM20060184 (22) 21.11.2006

(42) 01.12.2006

(71) Արմեն Ստեփանի Բուդաղյան (AM), Արա Ռուբենի Զալաշյան (AM)

(72) Արմեն Ստեփանի Բուդաղյան (AM), Արա Ռուբենի Զալաշյան (AM)

(73) Արմեն Ստեփանի Բուդաղյան, 0033, Երեւան, Ա.Խաչատրյան 4, բն. 72 (AM), Արա Ռուբենի Զալաշյան, 0817, Արարատի մարզ, Նոր Խարբերդի 14-րդ փող., 99/1 (AM)

(54) Ավտոտրանսպորտային միջոցի շարժման կայունության եւ կառավարելիության վերահսկման համակարգ

(57) Գյուտը վերաբերում է ավտոտրանսպորտային միջոցի, մասնավորապես՝ կցորդով կամ կիսակցորդով ավտոգնացքի շարժման կայունության վերահսկման համար նախատեսված արգելակների կառավարման համակարգին, որում օգտագործվում է ոչ հստակ տրամաբանության կառավարում:

Համակարգն ունի հակաշրջափակիչ արգելակային համակարգ, ավտոտրանսպորտային միջոցի եւ դրա անիվների վարքն ընկալող տվիչներ, դարձի անկյունային արագության սխալանքի որոշման միջոց, ավտոտրանսպորտային միջոցի անիվների համար ցանկալի սահքի գործակիցները որոշող ոչ հստակ տրամաբանության վերահսկիչ եւ արգելակային ճնշման ընդհանուր կարգավորիչ: Ավտոտրանսպորտային միջոցի ուղղահայաց առանցքի շուրջ կայունացնող դարձի մոմենտի ստեղծման ընթացքում հիմնական եւ օժանդակ անիվների մասնակցության աստիճանը հաշվի առնելու նպատակով այն ունի նաեւ ոչ հստակ տրամաբանության վերահսկիչի համար նշված ավտոտրանսպորտային միջոցի դարձի անկյունային արագության սխալանքի ու դրա ածանցյալի համակցմամբ ըստ արգելակվող հիմնական եւ օժանդակ անիվների դասակարգված մուտքային ազդանշանների ձեւավորման ենթահամակարգ, ավտոտրանսպորտային միջոցի կողային արագացման տվիչ եւ ոչ հստակ տրամաբանության վերահսկիչի կողմից որոշված ցանկալի սահքի գործակիցները ավտոտրանսպորտային միջոցի դարձի ուղղության նկատմամբ արտաքին կամ ներքին՝ կոնկրետ անվին վերագրող տրամաբանական փոխանջատիչ:

Բարձրացվում են ավտոտրանսպորտային

միջոցի շարժման կայունությունը եւ կառավարելիությունը, 7 նկ.:

(51) **(2006)** (11) **1957** (13) **A2**
C01F 7/00

(21) AM20060145 (22) 24.08.2006
(42) 01.12.2006

(71) Սերոբ Նշանի Ենգիբարյան (AM), Գոհար Աշոտի Սուխուդյան (AM)

(72) Սերոբ Նշանի Ենգիբարյան (AM), Գոհար Աշոտի Սուխուդյան (AM)

(73) Սերոբ Նշանի Ենգիբարյան, Երեւան, Գրիբոյեդովի 5ա, բն.44 (AM), Գոհար Աշոտի Սուխուդյան, Երեւան, Գայի պող. 53, բն.3 (AM)

(54) Նեֆելինային ապարից արգնահողի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է գունավոր մետաղագործությանը, մասնավորապես՝ նեֆելինային հումքի վերամշակմանը եւ կարող է կիրառվել արգնահողի արտադրության մեջ:

Նեֆելինային ապարից, կրաքարից, կալցի-նացված սողայից եւ արգնահող պարունակող ալյումասիլիկատային հումքից պատրաստում են բովախառնուրդ, եռակալում այն, եռակալվածքը լուծագատում, ապարախյուսը քամում և ստացված ալյումինատային լուծույթը մշակում հայտնի մեթոդով: Որպես ալյումասիլիկատային հումք օգտագործում են պեմզային տուֆի թափոնից ստացված նատրիումի հիդրոալյումասիլիկատի խտանյութ, նեֆելինային ապարի եւ խտանյութի զանգվածային 1:1 հարաբերակցությամբ:

Պարզեցվում է եղանակը, բարձրացվում են նեֆելինային հումքի վերամշակման արդյունավետությունը եւ կորզվող արգնահողի ելքը:

(51) **(2006)** (11) **1958** (13) **A2**
C01B 33/00

(21) AM20060162 (22) 22.09.2006
(42) 01.12.2006

(71) Սերոբ Նշանի Ենգիբարյան (AM), Գոհար Աշոտի Սուխուդյան (AM)

(72) Սերոբ Նշանի Ենգիբարյան (AM), Գոհար Աշոտի Սուխուդյան (AM)

(73) Սերոբ Նշանի Ենզիբարյան, Երեւան, Գրիբոյեդովի 5ա, բն.44 (AM), Գոհար Աշոտի Սուխուդյան, Երեւան, Գայի պող. 53, բն.3 (AM)

(54) Պեռլիտի մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է սիլիկատների քիմիային, մասնավորապես՝ արգնահող պարունակող հումքի մշակման եղանակներին եւ կարող է կիրառվել արգնահողի արտադրության համար:

Մանրացված պեռլիտի (-1,2+0,7).10⁻³ մ խոշորությամբ չափամասը տաքացնում են հորանային ուղղաձիգ վառարանում 1050°C ջերմաստիճանում, ապա սառեցնում օդում՝ ակտիվացման համար, որից հետո պեռլիտը մշակում են ալկալիական լուծույթով՝ հիմքասիլիկահողային լուծույթի եւ արգնահող պարունակող խտանյութի ստացումով, ալկալիական լուծույթի եւ պեռլիտի զանգվածային 5:1 հարաբերակցությամբ, ընդ որում որպես ալկալիական լուծույթ վերցնում են կաուստիկ սոդա և կալցինացված սոդա պարունակող լուծույթ, իսկ մշակումը կատարում են 30-50 րոպեի ընթացքում մթնոլորտային ճնշման ներքո 109-112°C ջերմաստիճանում:

Պարզեցվում է եղանակը, բարձրացվում են պեռլիտի մշակման արդյունավետությունը եւ կորզվող արգասիքների ելքը:

(51) (2006) (11) 1959 (13) A1
C01G 49/02
C22B 3/00
C22B 26/00

(21) AM20060133 (22) 01.08.2006
(42) 01.11.2006
(71) «ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (AM)
(72) Վարդան Այվազյան (AM), Սերգեյ Յայրապետյան (AM), Անատոլի Բայրամյան (AM), Վլադիմիր Գասպարյան (AM)
(73) «ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, Երեւան, Արդուբայան 10 (AM)

(54) Սիլիկատային ապարների համալիր մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիային եւ կարող է օգտագործվել սիլիցիումի երկօքսիդի, երկաթի եւ այլ մետաղների օքսիդների ստացման համար:

Մշակման եղանակը կայանում է նրանում,

որ մինչեւ 0,8մմ մանրացված ապարը ենթարկում են աղաթթվային մշակման, ստացված աղային լուծույթի pH-ը կարգավորում են նատրիումի հիդրօքսիդի միջոցով եւ իրականացնում են համապատասխան մետաղների հիդրօքսիդների եւ սիլիկաթթվի նստեցում: Մինչեւ աղաթթվային մշակումը ապարը նախապես բաժանում են առանձին ֆրակցիաների՝ նախ մազնիսական, ապա օդանցումային սեպարացիայի միջոցով:

Պարզեցվում է մշակման եղանակը:

(51) (2006) (11) 1960 (13) A2
C02F 1/40

(21) AM20060135 (22) 01.08.2006
(42) 01.11.2006
(71) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Կարապետ Ծերունի Թահմազյան (AM), Գագիկ Յուլալի Վարդերեսյան (AM), Էլիսա Էդուարդի Անտոնյան (AM), Լուսինե Տիգրանի Յարությունյան (AM)
(73) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Նավթանյութեր պարունակող հոսքաչրերի մաքրման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բնապահպանության բնագավառին:

Հոսքաչրերը մաքրում են ձեւափոխված փքած պեռլիտով, ընդ որում որպես ձեւափոխիչ օգտագործում են բենտոնիտ, չորրորդային ամոնիումային աղ եւ ջուր պարունակող խառնուրդ, բաղադրամասերի զանգվածային (0,03-2,0):(0,02-2,0):(30,0-40,0) հարաբերակցությամբ:

Ապահովվում է մաքրման բարձր արդյունավետություն, 4 նկ.:

(51) (2006) (11) 1961 (13) A2
C03C 10/00
C03C 3/076

(21) AM20060117 (22) 18.07.2006

(42) 01.11.2006
 (71) Ջենա Գեոդակյան (AM)
 (72) Ջենա Գեոդակյան (AM), Բերթա Պետրոսյան (AM), Սվետլանա Ստեփանյան (AM), Ռոզա Վարդանյան (AM), Կարեն Գեոդակյան (AM)
 (73) Ջենա Գեոդակյան, 0002, Երեւան, Մոսկովյան 28, բն. 82 (AM)
 (54) **Քետա - սպողումենային խեցապակի**
 (57) Գյուտը վերաբերում է սիլիկատների քիմիային եւ կարող է օգտագործվել ջերմային հարվածների նկատմամբ կայուն խոհանոցային եւ լաբորատոր ամանեղենի, սարքերի ու սարքավորումների արտադրության մեջ, ինչպես նաեւ որպես հավելանյութ ջերմային հարվածների նկատմամբ կայուն խեցե ու հրակայուն բաղադրանյութերի ստացման համար:
 Խեցապակին ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ. % . լիթիումի օքսիդ՝ 6,9-9,5, ալյումինիումի օքսիդ՝ 22,0-32,5, սիլիցիումի օքսիդ՝ 56,0 - 70,0, ցինկի օքսիդ՝ 1,5-2,2, ցիրկոնիումի օքսիդ՝ 0-1,5, տիտանի օքսիդ՝ 0-1,5:
 Բարձրացվում են խեցապակու ջերմակայունությունը եւ հրակայունությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1962 (13) A2
C03C 10/00
C04B 35/46
 (21) AM20060116 (22) 18.07.2006
 (42) 01.11.2006
 (71) Ջենա Գեոդակյան (AM)
 (72) Ջենա Գեոդակյան (AM), Էմմա Պողոսյան (AM), Բերթա Պետրոսյան (AM), Ռոզա Վարդանյան (AM), Կարեն Գեոդակյան (AM)
 (73) Ջենա Գեոդակյան, 0002, Երեւան, Մոսկովյան 28, բն. 82 (AM)
 (54) **Կայունացված ալյումինի տիտանատ**
 (57) Գյուտը վերաբերում է սիլիկատների քիմիային եւ կարող է օգտագործվել որպես հրակայուն նյութ կամ հավելանյութ ջերմային հարվածների նկատմամբ կայուն տեխնիկական խեցեղենի կազմում:
 Կայունացված ալյումինի տիտանատը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ. % . ալյումինի տիտանատ՝ 79,9- 96,8, սիլիցիումի օքսիդ՝ 3,2-20,9, լիթիումի օքսիդ՝ 0-1,4, քետա-սպողումենային խեցապակի՝ 0-10,0 եւ մոլիբդ՝ 0-10,0:

Բարձրացվում են խեցեղենի ջերմակայունությունը եւ մեխանիկական ամրությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1963 (13) A2
C04B 33/00
C03C 10/00
 (21) AM20060115 (22) 18.07.2006
 (42) 01.11.2006
 (71) Ջենա Գեոդակյան (AM)
 (72) Ջենա Գեոդակյան (AM), Արամ Կոստանյան (AM), Սվետլանա Սաղաթեյան (AM), Կլավդիա Գեոդակյան (AM), Բերթա Պետրոսյան (AM), Ռոզա Վարդանյան (AM), Կարեն Գեոդակյան (AM)
 (73) Ջենա Գեոդակյան, 0002, Երեւան, Մոսկովյան 28, բն. 82 (AM)
 (54) **Ջերմային հարվածների նկատմամբ կայուն խեցե բաղադրանյութ**
 (57) Գյուտը վերաբերում է սիլիկատների քիմիային եւ կարող է օգտագործվել բարձր ջերմային հարվածների, մեխանիկական եւ քիմիական ազդեցությունների նկատմամբ կայուն կառուցվածքային տարրերի, հանգույցների ու իրերի պատրաստման համար:
 Խեցե բաղադրանյութը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ. % . կորունդ՝ 6,4-39,8, մոլիբդ՝ 15,7-22,9, կայունացված ալյումինի տիտանատ՝ 33,7-58,8 եւ քետա -սպողումենային խեցապակի՝ 10,8-11,9:

Բարձրացվում են իրերի ջերմակայունությունը, հրակայունությունը, ամրությունը եւ էլեկտրամեկուսիչ հատկությունները:

(51) (2006) (11) 1964 (13) A2
C09D 5/00
C09D 1/00
 (21) AM20060139 (22) 04.08.2006
 (42) 01.11.2006
 (71) «Նաիրիտ-2» ՓԲԸ (AM)
 (72) Ալբերտ Վաչիկի Գեւորգյան (AM), Իշխան Մխիթարի Աղաջանյան (AM), Լիդա Յամազասպի Յարուբյանյան (AM), Գայանե Յովհաննեսի Մխիթարյան (AM), Գոհար Գարսեանի Սուքիասյան (AM), Վազգեն Եփրեմի Ավայան (AM), Էդուարդ Ժիրայրի Էմյան (AM), Ռուբեն Եղիշի

Սաղաթեյան (AM), Մարտին Խաչիկի Սահակյան (AM), Ժորժիկ Պետրոսի Մանվելյան (AM), Ալբերտ Գարսեանի Սուքիասյան (AM) (73) «Նահիրիտ- 2» ՓԲԸ, Երեւան, Բագրատունյաց 70 (AM)

(54) Զրադիսպերսային բաղադրանյութ

(57) Գյուտը վերաբերում է պոլիմերային քիմիային, մասնավորապես՝ ջրաներկային բաղադրանյութերին եւ կարող է կիրառվել սարքավորումների եւ շինարարական կառուցվածքների հակակոռոզիական պաշտպանության համար:

Բաղադրանյութը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգված. % . թաղանթագոյացուցիչ՝ «Նահիրիտ Պ-ՄС» կամ «Նահիրիտ Պ-ՄМА» մակնիշի քլորոպրենաակրիլատային համապոլիմերային լատեքս՝ 12,0-16,0, լաք «Էթինոլ»՝ 52,0-54,0, լցանյութ՝ 27,4-33,1, ներկանյութ՝ 0,3-3,8, հավելանյութ՝ 0,5-0,6 եւ կոռոզիայի դանդաղիչ՝ 0,1-0,2: Բարձրացվում են բաղադրանյութի հարակցական հատկությունները եւ ջրակայունությունը:

(51) **(2006)** (11) **1965** (13) **A2**
C09D 5/18
C09D 1/08
C09D 1/10

(21) AM20060185 (22) 22.11.2006
(42) 01.12.2006
(71) Կարեն Ոսկանի Ծուղունյան (AM)
(72) Կարեն Ոսկանի Ծուղունյան (AM)
(73) Կարեն Ոսկանի Ծուղունյան, Տավուշի մարզ, Իջեւան, Բլբուլյան 86, բն. 33 (AM)
(54) Հրակայուն խառնուրդ (տարբերակներ)
(57) Հայտարկված է հրակայուն խառնուրդի երկու տարբերակ:

Առաջին տարբերակը ներառում է չհանգած կիր, բենտոնիտային կավ, տեխնիկական աղ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). չհանգած կիր՝ 50-90, բենտոնիտային կավ՝ 4-20, տեխնիկական աղ՝ 11-30:

Երկրորդ տարբերակը ներառում է բենտոնիտային կավ, չհանգած կիր, պորտլանդցեմենտ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). բենտոնիտային

կավ՝ 30-50, չհանգած կիր՝ 20-30, պորտլանդցեմենտ՝ 40-60: Հրակայուն խառնուրդի երկու տարբերակները կարող են լրացուցիչ ներառել նաեւ հեղուկ ապակի:

Բարձրացվում է խառնուրդի հրակայունությունը, 2 անկախ կետ:

(51) **(2006)** (11) **1966** (13) **A2**
C23C 14/02

(21) AM20060134 (22) 01.08.2006
(42) 01.11.2006
(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Էմմա Ռուբենի Առաքելյան (AM), Գոհարիկ Գարեգինի Ասատրյան (AM), Ֆրիդրիխ Հակոբի Գրիգորյան (AM), Վերգինե Գագիկի Փարվանյան (AM), Գառնիկ Լեւոնի Գրիգորյան (AM), Լուսինե Գեղամի Թադեւոսյան (AM), Հայկ Ալեքսանի Բեգլարյան (AM), Սեդրակ Հմայակի Ղազարյան (AM), Ֆլորա Հայկի Արսենյան (AM), Հրաչիկ Վահրամի Գասպարյան (AM), Սամվել Գեորգիի Ալոյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Ֆինկի օքսիդի շերտի նստեցման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է ֆիզիկական քիմիայի բնագավառին:

Ըստ եղանակի ջրածնի գերօքսիդի գոլորշիները ուղղում են նախապես անդրամանուշակագույն ճառագայթահարման ենթարկված ցինկի օքսիդից պատրաստված թիրախ պարունակող հոսքային ռեակտոր, որտեղ հարկադրված ֆազային անցման հետեւանքով ցինկի օքսիդը տեղափոխվում եւ նստեցվում է նախապես խելատով ծածկված տակդիրի վրա: Տակդիրը տեղադրում են 25°C ջերմաստիճան թերմոստատում: Պրոցեսի ընթացքում ջրածնի գերօքսիդի գոլորշիների հետ մեկտեղ մատուցում են պերքացախաթթվի գոլորշիներ:

Ապահովվում է կայուն շերտի նստեցում սենյակային ջերմաստիճանում:

(51) **(2006)** (11) **1967** (13) **A2**
C30B 29/00
C01B 33/00

(21) AM20060176 (22) 06.11.2006
(42) 03.01.2007

(71) «ՀՀ ԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)

(72) Նշան Հովհաննեսի Չուլումյան (AM), Աննա Ռաֆայելի Իսահակյան (AM), Ադասի Ռազմիկի Թորոսյան (AM), Չարուհի Հայկի Հովհաննիսյան (AM), Գրիգոր Գեորգիի Գրիգորյան (AM)

(73) «ՀՀ ԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Արդրության փող. 2-րդ նրբ. 10 (AM)

(54) **Բազմաբյուրեղային սիլիցիումի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիային, մասնավորապես՝ բազմաբյուրեղային սիլիցիումի ստացման եղանակներին եւ կարող է կիրառվել մետաղագործության մեջ, էլեկտրատեխնիկայում եւ այլ բնագավառներում:

Սազնեզիումի փոշու եւ սերպենտինիտից ստացված սիլիկաժելի խառնուրդը 1 - 2 ժամ ենթարկում են մեխանաքիմիական ակտիվացման, ապա ջերմային մշակման 450 - 500°C ջերմաստիճանում 1-5 րոպեի ընթացքում, որից հետո ստացված միջանկյալ արգասիքը ենթարկում են աղաթթվային մշակման եւ անջատում սիլիցիումը:

Պարզեցվում է եղանակը, ապահովվում է գերդիսպերս սիլիցիումի ստացումը:

(51) **(2006)** (11) **1968** (13) **A2**
E05B 19/00

(21) AM20060105 (22) 06.07.2006
(42) 01.11.2006

(71) Արման Հովհաննիսյան (AM)

(72) Արման Հովհաննիսյան (AM)

(73) Արման Հովհաննիսյան, Երեւան, Գրիգոր Լուսավորչի 12, բն. 2ա (AM)

(54) **Ատամնաշարով բանալի**

(57) Գյուտը վերաբերում է փականքների բանալիներին:

Ատամնաշարով բանալին ունի միջուկ

եւ ատամնաձող, ընդ որում ատամնաձողի ատամներից յուրաքանչյուրն ունի տարբեր կառուցվածք: Միջուկի վրա կոշտ ամրակցված են ամբողջ բարձրությամբ կատարված սեկտորային հանվածքով գլանիկներ, իսկ հանվածքի մեջ տեղակայված է զսպանակած ձող: Ատամնաձողն իրականացված է ներքին եւ արտաքին ատամնաշարեր ունեցող օղակների տեսքով, ընդ որում օղակի ներքին ատամնաշարի ատամների մեկ նիստը գոգավոր է: Օղակները տեղադրված են գլանիկների վրա եւ հնարավորություն ունեն պտտվել դրանց շուրջը ժամացույցի սլաքի շարժման ուղղությամբ:

Մեծացվում են մեկ բանալու օգտագործման հնարավորությունները տարբեր փականքների բացման համար, 7 նկ.:

(51) **(2006)** (11) **1969** (13) **A2**
E05B 25/00

(21) AM20060092 (22) 09.06.2006
(42) 01.09.2006

(71) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան (AM), Էմիլ Գուրգենի Գրիգորյան (AM)

(72) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան (AM)

(73) Ալբերտ Պողոսյան, Երեւան, Շիրազի 20, բն.30 (AM), Էմիլ Գուրգենի Գրիգորյան, Երեւան, Տերյան 83, բն. 12 (AM)

(54) **Փականք**

(57) Փականքն ունի իրան, դրա մեջ պտտվելու հնարավորությամբ տեղակայված միջուկ, վերին փակիչ զսպանակած բույթեր եւ ճակատային մասում արված գնդաձեւ հանվածքով ստորին փակիչ բույթեր իրենց գնդիկներով, ընդ որում բույթերը տեղակայված են իրանի եւ միջուկի իրար համառանցք շառավղային անցքերի մեջ: Փականքն ունի նաեւ գնդիկների հետ համագործակցող հանվածքներով բանալի: Վերին փակիչ զսպանակած բույթերի առկայությունը տեղակայված է անմիջապես ստորին փակիչ բույթեր հանդիսացող եւ տարբեր տրամագծեր ունեցող գնդիկների հետ փոխադրելու հնարավորությամբ:

Պարզեցվում է փականքի կառուցվածքը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1970 (13) A2
E21C 41/00
E21C 41/26

(21) AM20060151 (22) 31.08.2006
(42) 01.12.2006
(71) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Մկրտչյան (AM)
(72) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Մկրտչյան (AM), Կարեն Մկրտչյան (RU), Վահե Հակոբյան (AM)
(73) Մաքսիմ Հակոբյան, Քաջարան, Չարենցի 5, բն.4 (AM), Բորիկ Մկրտչյան, Երեւան, Գայի պող. 4, բն.109 (AM)

(54) Օգտակար հանածոների հանքավայրերի բաց մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել լեռնային բացահանքերի շահագործման ժամանակ:

Հանքամարմինը բաժանում են գոտիների եւ դրանց ծանրության կենտրոններով անցկացնում են հանքիջանցքներ: Հանքիջանցքների ուղղությամբ անցկացնում են թեք խրամներ, դրանց հանույթը դեպի բացահանքի եզրերը հորիզոնական տանելով ձեւավորում են գլխավոր կտրող խրամը, նրա հետ խաչվող կտրող խրամները եւ դրանցով առանձնացվող հանքամարմնի զանգվածները: Հանքիջանցքները իրար հետ են միացնում գլխավոր կտրող խրամով այնպես, որ բացահանքի կենտրոնական մասում գտնվող հանքիջանցքները տեղակայվեն գլխավոր կտրող խրամի հակադիր կողերի վրա, իսկ եզրային հանքիջանցքները նրա ծայրերում: Հանքիջանցքները տեղակայում են մեկից ավելի հորիզոններով մշակվող հանքամարմնի առանձնացված զանգվածների կենտրոնական մասում եւ վերջինիս վրա ձեւավորում են հանքաստիճանների տարբեր հորիզոնները հանքիջանցքի հետ կապող հանքաթեքատներ: Գլխավոր խրամի հետ խաչվող կտրող խրամները տեղակայում են գլխավոր կտրող խրամի հակադիր կողերի եւ եզրերի երկու կից հանքիջանցքներով տեղափոխվող զանգվածի նվազագույն տրանսպորտային ծախսեր ապահովող գծերի վրա:

Ապահովվում է մշակման ինտենսիվությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1971 (13) A2
E21C 41/00

(21) AM20060137 (22) 01.08.2006
(42) 01.12.2006
(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Յուրի Անդրեի Աղաբալյան (AM), Արմեն Հենրիկի Հովհաննիսյան (AM)
(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Ստորգետնյա դատարկությունների ձեւավորման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է դատարկությունների ստեղծմամբ օգտակար հանածոների ստորգետնյա մշակմանը եւ կարող է օգտագործվել հանքի հանութային տարածությունում տնտեսական օբյեկտների տեղավորման համար:

Եղանակը ներառում է օգտակար հանածոների հանքամարմնի յուրաքանչյուր բլոկում նախապատրաստական փորվածքների անցկացում, լեռնային զանգվածի հանում, կրող պատերի եւ ծածկի ստեղծում: Նախապատրաստական փորվածքները կատարում են դաշտային բացատար եւ օդափոխման հանքամիջանցքների եւ տրանսպորտային հանքաթեքի անցկացման միջոցով: Տրանսպորտային հանքաթեքից դեպի յուրաքանչյուր ենթահարկ անցկացնում են ենթահարկային հանքամիջանցքներ, իսկ դրանցից եւ բացատար հանքամիջանցքից յուրաքանչյուր խցի համար՝ ենթահարկային օրտ-մուտքեր: Բլոկի կենտրոնում ստեղծում են բլոկային դաշտային հանքիջանցք, բլոկի վերին շերտը մշակում են հանքամարմնի տարածման խաչող ուղղությամբ կողմնորոշված լավայի առաջացմամբ, բլոկի հատակին տեղադրում են ամրանային հիմնակմախք, այն լցնում են պնդացող խառնուրդով եւ ստեղծում երկաթբետոնե սալ, որով ծածկում են բլոկի վերին շերտը ամբողջությամբ: Երկաթբետոնե սալի պաշտպանության տակ պահեստավորում են օգտակար հանածոները եւ հանքաքարը արդյունահանում վերընթաց ուղղությամբ: Հանութային տարածությունը լցնում են բետոնով, ստեղծելով պատ - դիաֆրագմաներ:

Ընդլայնվում են հանքերի հանութային տարածությունների օգտագործման հնարավորությունները, 1 նկ. :

(51) (2006) (11) 1972 (13) A2
E21C 41/00

(21) AM20060150 (22) 31.08.2006
(42) 01.12.2006
(71) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Սկրտչյան (AM)
(72) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Սկրտչյան (AM), Կարեն Սկրտչյան (RU), Վահե Հակոբյան (AM)
(73) Մաքսիմ Հակոբյան, Սյունիքի մարզ, Զաջարան, Չարենցի 5, բն.4 (AM), Բորիկ Սկրտչյան, Երեւան, Գայի պող. 4, բն.109 (AM)

(54) **Օգտակար հանածոների հանքավայրերի բաց մշակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել լեռնային բացահանքերի շահագործման ժամանակ:

Հանքամարմինը բաժանում են գոտիների եւ դրանց ծանրության կենտրոններով անցկացնում են հանքիջանցքներ: Հանքիջանցքների ուղղությամբ անցկացնում են թեք խրամներ, դրանց հանույթը դեպի բացահանքի եզրերը հորիզոնական տանելով ձեւավորում են գլխավոր կտրող խրամը, նրա հետ խաչվող կտրող խրամները եւ դրանցով առանձնացվող հանքամարմնի զանգվածները: Հանքիջանցքները տեղակայում են գլխավոր կտրող խրամի վրա՝ մեկից ավելի հորիզոններով մշակվող հանքամարմնի առանձնացված զանգվածների կենտրոնական մասում, վերջինիս վրա ձեւավորում են հանքաստիճանների տարբեր հորիզոնները հանքիջանցքի հետ կապող հանքաթեքատներ: Գլխավոր խրամի հետ խաչվող կտրող խրամները տեղակայում են երկու կից հանքիջանցքներով տեղափոխվող զանգվածի նվազագույն տրանսպորտային ծախսեր ապահովող գծերի վրա: Հանքամարմնի առանձնացված զանգվածների հանույթն իրականացնում են կտրող խրամների հանույթին զուգահեռ՝ կենտրոնից դեպի բացահանքի եզրերը ուղղությամբ, իսկ կտրող խրամների ձեւավորման ավարտից հետո հանքամարմնի առանձնացված զանգվածների հարակից հանքաստիճանների հանույթը տանում են բացահանքի եզրերից՝ մեկը մյուսին ընդառաջ:

Ապահովվում է մշակման ինտենսիվությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1973 (13) A2
F02B 53/00

(21) AM20060174 (22) 31.10.2006
(42) 03.01.2007
(71) Արման Հովհաննիսյան (AM)
(72) Արման Հովհաննիսյան (AM)
(73) Արման Հովհաննիսյան, Երեւան, Գրիգոր Լուսավորչի 12, բն. 2ա (AM)

(54) **Ռոտորային ներքին այրման շարժիչի միաց**
(57) Ռոտորային ներքին այրման շարժիչի միացն ունի անշարժ եւ շարժուն հատվածամասեր: Միացի անշարժ հատվածամասում տեղակայված է շարժիչի գլանը: Միացի անշարժ հատվածամասի իրանի վերջնամասի վերին մասում՝ միացի շարժման ուղղությամբ հակառակ թեքությամբ կատարված են միջաթափանց անցքեր: Միացի անշարժ հատվածամասի գլանում ներդրված է թեք անցքերով ձվաձեւ սկավառակ, որի վերին մակերեսային վրա անցքերին համառանց կոշտ ամրակցված են սևամեջ գլանիկներ, որոնք առանցքային շարժման հնարավորությամբ տեղակայված են միացի անշարժ հատվածամասի իրանում կատարված միջաթափանց անցքերի մեջ: Գլանիկի ծայրի ներքին մակերեսային արված է գնդաձեւ փորակ, որի մեջ առանցքային շարժման եւ գլանիկի եզրից ցցվելու հնարավորությամբ տեղադրված է լողացող գնդիկ: Սևամեջ գլանիկների ստորին մասում տեղակայված են սեղմման զսպանակներ, որոնք մեկ ծայրով ամրակցված են գլանիկի հիմքին, իսկ մյուս ծայրով՝ միացի անշարժ հատվածամասի իրանի ներքին մակերեսային, ընդ որում նախնական դիրքում գլանիկների վերին եզրերն ու միացի անշարժ հատվածամասի իրանի արտաքին մակերեսային համընկնում են: Ձվաձեւ սկավառակի վերին մակերեսային ծայրամասերին կոշտ ամրակցված են հենակային ձողիկներ:

Պարզեցվում է կառուցվածքը, 11 նկ:

(51) (2006) (11) 1974 (13) A2
F03G 7/00

(21) AM20050209 (22) 22.11.2005
(42) 01.08.2006
(71) Ջանիկ Մամիկոնի Ճավրշյան (AM), Վահագն Ջանիկի Մամիկոնյան (AM)

(72) Ջանիկ Մամիկոնի ճավրշյան (AM), Վահագն Ջանիկի Մամիկոնյան (AM)

(73) Ջանիկ Մամիկոնի ճավրշյան, Երեւան, Նոր Նորք 1-ին միկրոշրջան, Բաղյան 1, բն. 25 (AM), Վահագն Ջանիկի Մամիկոնյան, Երեւան, Նոր Նորք 1-ին միկրոշրջան, Բաղյան 1, բն. 25 (AM)

(54) Էլեկտրաէներգիայի ստացման եղանակ եւ գրավիտացիոն կայանք դրա իրագործման համար

(57) Գյուտը վերաբերում է էներգետիկայի բնագավառին: Կայանքը կարելի է օգտագործել անբարենպաստ բնակլիմայական պայմաններ ունեցող վայրերի էլեկտրաֆիկացման համար:

Էլեկտրաէներգիայի ստացման համարման րահատիկ սորուն ավազը կամ ստորգետնյա ջուրն արեգակնային եւ քամու էներգիաների կիրառմամբ տեղափոխում են բարձրության վրա տեղադրված մեծածավալ տարողությունների մեջ: Այնուհետեւ ավազը կամ ստորգետնյա ջուրն աստիճանաբար ինքնահոս ձեւով լցվում է պտտվող փոկի անոթների մեջ, որը առաջացնում է էլեկտրազենտրատորի լիսեռի պտույտ, 2 անկախ կետ, 2սկ.:

**(51) (2006) (11) 1975 (13) A2
F16F 7/00**

(21) AM20060119 (22) 20.07.2006
(42) 01.11.2006

(71) Արման Յովհաննիսյան (AM)
(72) Արման Յովհաննիսյան (AM)
(73) Արման Յովհաննիսյան, Երեւան, Գրիգոր Լուսավորչի 12, բն. 2ա (AM)

(54) Մեղմիչ

(57) Գյուտը վերաբերում է ավտոմեքենաշինությանը:

Մեղմիչն ունի ստորին եւ սևամեջ վերին հանգույցներ, ընդ որում սեղմման շարժի ժամանակ ստորին հանգույցը մտնում է վերին հանգույցի մեջ: Վերին հանգույցն ունի կենտրոնական գլանաձեւ եւ վերին ու ստորին կոնաձեւ հատվածամասեր: Կենտրոնական գլանաձեւ հատվածամասի ներքին մակերեսային կատարված են պարուրաձեւ ակոսներ: Ստորին հանգույցն ունի ստորին անշարժ եւ վերին շարժուն հատվածամասեր, ընդ որում ստորին հանգույցի ստորին անշարժ հատվածամասի

շուրջը տեղադրված է սեղմման զսպանակ, իսկ վերին շարժուն հատվածամասի վերին մասում տեղակայված են աշխատանքային ընթացքի ժամանակ մեկ կողմ ծավիղ զսպանակած թելիկներ: Չսպանակած թելիկները հետադարձ շարժի ժամանակ հնարավորություն ունեն մտնելու վերին հանգույցի կենտրոնական գլանաձեւ հատվածամասի ներքին մակերեսային կատարված պարուրաձեւ ակոսների մեջ: Պարզեցվում է կառուցվածքը, 12 սկ.:

**(51) (2006) (11) 1976 (13) A2
F16H 21/00**

(21) AM20060153 (22) 11.09.2006
(42) 01.12.2006

(71) Լեւոն Թումանի Մանանդյան (AM), Վանիկ Գրիգորի Աղամյան (AM), Գեւորգ Միքայելի Չալիմցյան (AM), Արմեն Լեւոնի Մանանդյան (AM)
(72) Լեւոն Թումանի Մանանդյան (AM), Վանիկ Գրիգորի Աղամյան (AM), Գեւորգ Միքայելի Չալիմցյան (AM), Արմեն Լեւոնի Մանանդյան (AM)
(73) Լեւոն Թումանի Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM), Վանիկ Գրիգորի Աղամյան, Գյումրի, 26 Կոմիսարների 82ա (AM), Գեւորգ Միքայելի Չալիմցյան, Գյումրի, Մանուշյան 231/203 (AM), Արմեն Լեւոնի Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM)

(54) Կուլիսալծակային հիպերբոլագրիչ

(57) Գյուտը վերաբերում է մեխանիկայի բնագավառին, մասնավորապես՝ կուլիսալծակային մեխանիզմներին, եւ կարող է օգտագործվել կենտրոնական ուժի դաշտում հիպերբոլական ուղեծրով շարժվող կետի դիրքը եւ արագության ուղղությունը որոշելու համար:

Հիպերբոլագրիչն ունի հողակապավոր հակազուգահեռագիծ մեխանիզմ եւ առաջին ու երկրորդ կուլիսներ: Մեխանիզմի առաջին եւ երրորդ հակադիր հողակապերը ամրակցված են հիպերբոլի կիզակետերում: Առաջին կուլիսը կատարված է որպես հակազուգահեռագիծ մեխանիզմի առաջին եւ երկրորդ հողակապերը միակցող օղակ, իսկ երկրորդ կուլիսը՝ երրորդ եւ չորրորդ հողակապերը միակցող օղակն ընդգրկող տարր: Կուլիսների սողանները միակցված են իրար հողակապորեն եւ կազմում են երկսանձանի խումբ: Հիպերբոլագրիչն

ունի ակոսով լծակ եւ ակոսով ձող: Լծակը մեկ ծայրով միակցված է հակազուգահեռագիծ մեխանիզմի առաջին հողակապին: Հակազուգահեռագիծ մեխանիզմի չորրորդ հողակապը կատարված է լծակի ակոսով տեղաշարժման հնարավորությամբ, իսկ երկսանձանի խմբի հողակապը՝ ձողի ակոսով տեղաշարժման հնարավորությամբ: Ձողը մեկ ծայրով սողանի միջոցով կապված է լծակին, ունի լծակի ակոսով տեղաշարժման հնարավորություն եւ ուղղված է լծակին ուղղահայացի, իսկ գծվող հիպերբոլին՝ շոշափողի ուղղությամբ:

Ընդլայնվում են հիպերբոլագրիչի ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2006) (11) 1977 (13) A2

F41B 15/00

(21) AM20060064 (22) 21.04.2006

(42) 01.08.2006

(71) Միքայել Խաչիկի Ղուկասյան (AM)

(72) Միքայել Խաչիկի Ղուկասյան (AM)

(73) Միքայել Խաչիկի Ղուկասյան, Երեւան, Համբարձումյան 47, բն. 22 (AM)

(54) **Էլեկտրահարող սարք «Գյուրգա»**

(57) Գյուտը վերաբերում է խոցելու էլեկտրական միջոցներ ունեցող գենքին:

Սարքն ունի հանովի կափարիչով իրան եւ իրանի մեջ տեղակայված սնուցման ինքնավար աղբյուր, հպակային մեկուսատախտակ եւ բարձրավոլտ կերպափոխիչի բլոկ, որը կատարված է մուտքային շղթայի հպակներ, ձեռքի շարժաբեր կոճակ եւ սրված էլեկտրոդներ ունեցող շարժական մոդուլի տեսքով: Շարժական մոդուլն ունի իրանի մեջ երկայնական ուղղությամբ տեղաշարժի հնարավորություն: Հպակային մեկուսատախտակը երկկողմանի է, մեկ կողմով այն հպարկվում է սնուցման աղբյուրի հետ, իսկ մյուս կողմով, սահող հպակների միջոցով՝ շարժական մոդուլի հետ, որի հետ մեկուսատախտակը կապված է ճկուն տարրի միջոցով: Էլեկտրոդներն ամրակցված են շարժական մոդուլի ճակատային մասում, իսկ իրանի ճակատային պատին կան էլեկտրոդների ելքի անցքեր: Սնուցող լարումը մատուցվում է բարձրավոլտ կերպափոխիչին միայն էլեկտրոդների դուրս ցցված դիրքում:

Բարձրացվում են սարքի քողարկվածությունը եւ կիրառողի անվտանգությունը, 7 նկ.:

(51) (2006) (11) 1978 (13) A2

G01B 3/02

A43B 13/00

(21) AM20060169 (22) 18.10.2006

(42) 03.01.2007

(71) Աշոտ Ռաֆիկի Պապոյան (AM), Արուսյակ Յովհաննեսի Մանուկյան (AM), Հարություն Գագիկի Պեպեյան (AM)

(72) Աշոտ Ռաֆիկի Պապոյան (AM), Արուսյակ Յովհաննեսի Մանուկյան (AM), Հարություն Գագիկի Պեպեյան (AM)

(73) Աշոտ Ռաֆիկի Պապոյան, 3118, Գյումրի, 26 կոմիսարների 60 (AM), Արուսյակ Յովհաննեսի Մանուկյան, 3106, Գյումրի, Լազոյի 47 (AM), Հարություն Գագիկի Պեպեյան, 3106, Գյումրի, Սպենդիարովի 12 (AM)

(54) **Ճկվածքի չափման սարք**

